ԳԵՐՄԱՆԱ-ՀԱՅԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ ԵՎ ՆՐԱ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ (1939-1956 ԹԹ.) *

ՀՏԴ 930 *DOI: 10.52063/25792652-2024.3.22-44*

ՄԵՐԻ ՆԱՁԱՐՅԱՆ
Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ագրոբիզնեսի և տնտեսագիտության ֆակուլտետի հասարակական գիտությունների ամբիոնի վարիչ, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ, ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
meri.nadzharyan@mail.ru
ORCID: 0009-0004-8517-7215

ՀՐԱՆՈՒՇ ՍԱՀԱԿՅԱՆ
Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ագրոբիզնեսի և տնտեսագիտության ֆակուլտետի հասարակական գիտությունների ամբիոնի ասիստենտ, պատմական գիտությունների թեկնածու, ք. Արտաշատ, Հայաստանի Հանրապետություն
hranush.sahakyan@mail.ru
ORCID: 0009-0003-3799-3042

Հոդվածի նպատակն է կոնկրետ փաստական նյութերի հիման վրա լուսաբանել 1914 թ. հունիսի 16-ին Բեռլինում հիմնադրված Գերմանա-հայկական ընկերության (այսուհետև՝ ԳՀԸ, գերմ.՝ Deutsch-Armenische Gesellschaft, DAG) ծավալած հայանպաստ գործունեությունը երկրորդ աշխարհամարտի ժամանակաշրջանում: Մասնավորապես՝ անդրադարձ է կատարվում ընկերության հայափրկիչ աշխատանքներին, ներկայացվում են Գերմանիայում հայանպաստ հասարակական կարծիքի ձևավորման և հայ-գերմանական մշակութային կապերի սերտացման ուղղությամբ նրա ձեռնարկած քայլերը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ այսօր աշխարհում ընթացող բազմաթիվ գործընթացներ որոշակի աղերսներ ունեն մեր ուսումնասիրության առարկա դարձած հիմնահարցի հետ, այդ առումով հասկանալի է դառնում խնդրի լուսաբանման կարևորությունը հայկական քաղաքական և պատմական մտքի տեսակետից:

Առաջադրված նպատակին հասնելու համար թեմայի հետազոտման ընթացքում մեր առջև դրել ենք հետևյալ հիմնական խնդիրները՝ կոնկրետ փաստական նյութի հիման վրա քննական վերլուծության ենթարկել Երկրորդ աշխարհամարտի տարիներին կազմակերպության իրականացրած աշխատանքները, ի ցույց հանել դրանց հիմնական արդյունքները, պարզաբանել դրա լուծարման պատճառը: Թեպետ թեմային այս կամ այն չափով առնչվող առանձին հիմնահարցեր պատշաճ մակարդակով ուսումնասիրված են, այնուամենայնիվ, մեր ուսումնասիրության առարկա

* Հոդվածը ներկայացվել է 01.09.2024թ., գրախոսվել՝ 01.10.2024թ., տպագրության ընդունվել՝ 31.10.2024թ.:

դարձած հիմնահարցը նշված ժամանակագրական սահմաններում նախկինում ամբողջական, համակարգված ուսումնասիրության չի ենթարկվել: Քննությունը կատարվել է մեծ մասամբ պատմագիտության մեջ դեռևս շրջանառության մեջ չդրված արժեքավոր գերմանական սկզբնաղբյուրների լայն հենքի վրա:

Ուսումնասիրությունն իրականացվել է տարաբնույթ սկզբնաղբյուրների և թեմային վերաբերվող գրականության համեմատական ու քննական վերլուծության մեթոդաբանությամբ, պատմանկարագրողական մեթոդի և պատմականության սկզբունքի կիրառմամբ:

Հետազոտության հիմնական եզրահանգումն այն է, որ պատերազմի տարիներին ԳՀԸ-ն, չշեղվելով իր գաղափարական ելակետերից, շարունակել է հայանպաստ գործունեությունը և հայ-գերմանական մշակութային կապերի խթանումը: Սրան զուգահեռ պետք է արձանագրել, որ ընկերությունը 1944 թվականին կասեցրել է իր գործունեությունը, իսկ 1956 թվականին հեռացվել է Բեռլինի միությունների ցանկից:

Հիմնաբառեր՝ *Գերմանա-հայկական ընկերություն, պատերազմ, դր. Պաուլ Ռոհրբախ, պրոֆ. Արտաշես Աբեղյան, մշակույթ, հայ-գերմանական կապեր, լուծարում:*

Ներածություն

Երկրորդ աշխարհամարտի նախօրյակին ԳՀԸ-ն հսկայածավալ աշխատանք է իրականացրել արտերկրում հայերի հալածանքների կանխարգելման և նրանց ազգային ինքնության պահպանման համար: Ի մասնավորի նշենք, որ ֆաշիստական երկրներում՝ Գերմանիայում, 1938 թ. նրան միացված Ավստրիայում, ինչպես նաև Իտալիայում, հայերը, որոնք թուրքական քարոզչության ուժով դասվել էին ոչ արիական ժողովուրդների շարքում և ազգակից էին համարվում հրեաների հետ, փրկվում են նրանց ճակատագրին արժանանալու վտանգից ընկերության և այլ գաղափարակից կազմակերպությունների՝ իշխանությունների հետ վարած բանակցությունների ու նրանց ծավալած գրապայքարի շնորհիվ, որի ընթացքում փաստելով հայ ժողովրդի՝ արիական ռասային պատկանելությունը՝ զուգահեռաբար ներկայացվում էին գաղթաշխարհի հայերի հետ մշակութային սերտ համագործակցություն հաստատելու անհրաժեշտությունը պարզաբանող տեսակետներ, որոնք էլ նպաստում են հայերի հանդեպ հիշյալ պետությունների իշխանությունների տրամադրությունների փոփոխման և նրանց արիացեղ ժողովուրդների անվանացանկում ընդգրկելու համար:

Երկրորդ աշխարհամարտը սկսվելուց հետո վերստին մահաբեր ամպեր են կուտակվում հայ ժողովրդի գլխավերևում: Գերմանիայի իշխանությունները հետապնդումներ են սկսում թշնամի պետությունների տարածքից տեղափոխված հայերի նկատմամբ: Բացի այդ՝ թուրքական քարոզչամեքենան գերմանական զանգվածային լրատվամիջոցներում վերստին շրջանառության մեջ է դնում հայերի և հրեաների ռասայական նույնականության անհիմն տեսակետը. քարոզ, որի ազդեցությամբ Գերմանիայում և նրա կողմից ռազմակալված երկրներում բնակվող հայերը կարող էին դառնալ նոր հնարավոր արհավիրքի՝ ցեղասպանության զոհեր:

Համանման պայմաններում, շարունակելով իր հայանպաստ առաքելությունը, ԳՀԸ-ն իր կապերն ու հնարավորություններն ի սպաս է դնում վտանգված հայությանը օգնելու ու փրկելու գործին: Զուգահեռաբար կազմակերպությունը, ի դեմս իր հայ անդամների, աշխատանքներ է ծավալվում հայ և գերմանացի ժողովուրդների մշակութային կապերի զարգացումը խթանելու ուղղությամբ:

Սույն հոդվածով կփորձենք լուսաբանել Երկրորդ աշխարհամարտի տարիներին ԳՀԸ-ի ծավալած գործունեությունը՝ անդրադառնալով նաև նրա լուծարման հիմնական շարժառիթներին:

Գերմանա-հայկական ընկերության՝ վտանգված հայերի փրկությանն ուղղված աշխատանքները պատերազմի ժամանակաշրջանում

1914 թ. Բեռլինում հիմնադրված ԳՀԸ-ն Երկրորդ աշխարհամարտի տարիներին մեծ ջանքեր է գործադրել Գերմանիայում և նրա ռազմակալած երկրներում օրհասական վիճակում գտնվող հայերի դրության բարելավման, ինչպես նաև հայ-գերմանական գիտամշակութային կապերի զարգացումն ու խորացումը խթանելու համար:

Գերմանիայում բնակվող այն հայերը, որոնք տեղափոխվել էին թշնամի պետությունների՝ Անգլիայի, Ֆրանսիայի և նրանց կողմից վերահսկվող երկրների, օրինակ՝ Եգիպտոսի կամ Լիբանանի տարածքից, պատերազմի բռնկումից հետո իշխանությունների կողմից, դիտվելով որպես անգլիացի կամ ֆրանսիացի, ենթարկվում էին հետապնդումների (Schäfer (109) 21): Բացի այդ՝ գերմանական զանգվածային լրատվական միջոցներում իր ավանդական սև գործն էր կատարում թուրքական հակահայկական քարոզչությունը: Հայերի արիական ծագումը վերստին (ինչպես դեռևս 1930-ական թթ. առաջին կեսին՝ Ազգայնական-սոցիալիստական գերմանական բանվորական կուսակցության հաղթանակից և Գերմանիայում Ադոլֆ Հիտլերի (1933-1945 թթ.) կողմից իշխանության գրավումից հետո) կասկածի տակ էր դրվել (Հայկականութիին-արիականութիին 13):

Այդ վտանգաշատ իրավիճակում, բնականաբար, ԳՀԸ-ի խնդիրը պետք է դառնար նման ըմբռնումների դեմ պայքարի ծավալումը, որին կազմակերպությունը լծվում է իր ամբողջ եռանդով: Արդյունավետ բանակցություններ վարելով Գերմանիայի ԱԳՆ-ի հետ՝ դրա նախագահ դր. Պաուլ Ռոհրբախը (Հայկականութիին-արիականութիին 128) [1] կարողանում է թշնամի պետությունների կամ նրանց կողմից վերահսկվող երկրների տարածքից Գերմանիա տեղափոխված հայերի վիճակը բավականաչափ թեթևացնել. կառավարությունը հիմնականում փոխում է իր բացասական դիրքորոշումը նրանց նկատմամբ: Այս կապակցությամբ ԳՀԸ-ի քարտուղար Ռիխարդ Շեֆերը 1939 թ. գրում էր հետևյալը. «Որոշ գործեր դեռ ընթացքի մեջ են» (Schäfer (109) 21):

Այստեղ կարող է հարց առաջանալ, թե բովանդակային առումով ի՞նչ բանակցություններ է վարել ԳՀԸ-ի նախագահը կառավարության ներկայացուցիչների հետ: Կարելի է, անշուշտ, կռահումներ անել, բայց քանի որ չունենք անհրաժեշտ փաստեր հարցի առնչությամբ, կխուսափենք դրանից:

Ինչ վերաբերում է գերմանական զանգվածային լրատվության միջոցներում թուրքերի կողմից հայ ժողովրդի մասին շրջանառության մեջ դրված կեղծիքներին, ապա դրանց հերքման և Գերմանիայի թե՛ հասարակական, թե՛ պաշտոնական շրջաններում հայանպաստ կարծիք և վերաբերմունք ձևավորելու նպատակով ԳՀԸ-ն

[1] Պ. Ռոհրբախը ծնվել է 1869 թ. հունիսի 29-ին Իրգենում (Էկուրլանդ): 1887-1898 թթ. ուսանել է պատմություն և աշխարհագրություն Դորպատի (այժմ՝ Տարտու) համալսարանում, այնուհետև ուսումը շարունակել է աստվածաբանության բնագավառում և, 1888 թ. Ստրասբուրգում հանձնելով ավարտական քննությունը, ստացել է աստվածաբանի ակադեմիական կոչում: 1888 թ. դարձել է Ավետարանական-սոցիալական հանձնաժողովի գլխավոր քարտուղարը: 1891 թ. ստանձնել է նաև “Die Zeit” («Ժամանակ») քաղաքական շաբաթաթերթի գլխավոր խմբագրի պարտականությունները և նույն տարում Բեռլինում պաշտպանելով իր դոկտորական ատենախոսությունը՝ ստացել է փիլիսոփայության դոկտորի գիտական աստիճան:

ձեռնամուխ է լինում իր պաշտոնական օրգանի՝ 1937 թ. ի վեր հրատարակվող “Mitteilungsblatt der Deutsch-Armenichen Gesellschaft e. V. Berlin” (այսուհետև՝ MDAG, հայ.՝ «Գերմանա-հայկական ընկերության տեղեկաթերթ») վեցամսյա պարբերականի (խմբագիրներ՝ դր. Պ. Ռոհրբախ և պրոֆ. Արտաշես Աբեղյան) լայն ծավալով հրատարակմանը: Այսուհետև այն լույս էր ընծայվում երկամսյա պարբերականությամբ և անվճար առաքվում էր ընկերության անդամներին (Der Vorstand der Deutsch-Armenischen Gesellschaft i. A. Dr. Paul Rohrbach. Vorsitzender. Kurze Berichte. Aus der Deutsch-Armenischen Gesellschaft (127) 15): Հավելենք, որ 1943 թ. փոքրիկ փոփոխություն է կատարվում դրա վերնագրում: Դեկտեմբերից պարբերականը (թիվ 15-16) հրապարակվում էր “Armenien. Mitteilungsblatt der Deutsch-Armenischen Gesellschaft e. V. Berlin” (այսուհետև՝ “Armenien”, հայ.՝ «Հայաստան: Գերմանա-հայկական ընկերության տեղեկաթերթ») խորագրի ներքո (Kurze Berichte. „Armenien“, Mitteilungsblatt der Deutsch-Armenischen Gesellschaft, “Armenien. Mitteilungsblatt der Deutsch-Armenischen Gesellschaft e. V. Berlin” 215 (23)):

Պարբերականի էջերում զետեղված հոդվածները, որոնց ծավալը տատանվում էր առավելագույնը 4-5 էջի սահմաններում, հիմնականում վերաբերում էին Հայաստանի աշխարհագրությանը, տնտեսությանը, ժողովրդագրական կազմին, հայոց պատմությանը, հայ եկեղեցուն ու հայկական մշակույթին, գերմանա-հայկական հարաբերություններին: Անտեսված չէր հայերի արիական պատկանելության հարցը: Անդրադարձներ կային նաև ժամանակի քաղաքական իրադարձություններին: Նման հրապարակումները, սակայն, հազվադեպ էին, ինչը պայմանավորված էր պատերազմական իրադրության պայմաններում գործող արգելքներով և սահմանափակումներով (Schäfer 20 (108)):

Այսուհանդերձ, 1942 թ. ամռանը, երբ Գերմանիան, նպատակ ունենալով տիրանալ Կովկասի նավթային հարստություններին, անցնում է հարձակման, պարբերականն իր էջերում սկսում է հաճախակի ներկայացնել քաղաքական թեման շոշափող հոդվածներ: Օրինակ՝ «Կովկաս» (Rohrbach, Kaukasien 1(169)-3(171)) վերնագրով հոդվածում, որը պատկանում էր դր. Պ. Ռոհրբախի գրչին, բոլշևիզմը համարվում էր «մահացու հարկադրանք» (Rohrbach, Kaukasien 2 (170)) և նշվում էր, որ «ամբողջ Կովկասը կթևակոխի ազատության ժամանակաշրջան, եթե թոթափի խորհրդային լուծը» (Rohrbach, Kaukasien 3 (171)):

Նույն հեղինակի գրչին պատկանող մեկ ուրիշ հոդվածում՝ «Արևելքը անկայունության մեջ» (Rohrbach, Der Orient in Bewegung 129(1) - 4(132)), պատմական ընդարձակ ակնարկից հետո, որը լուսաբանում էր վաղ միջնադարից ի վեր Արևելքում տեղի ունեցած բոլոր կարևորագույն աշխարհաքաղաքական իրադարձությունները, անդրադարձ էր կատարվում Օսմանյան կայսրությունում հայերի ողբերգական ճակատագրին, ներկայացվում էին վիճակագրական տեղեկություններ Խորհրդային Հայաստանում և նրա սահմաններից անդին՝ խորհրդային մյուս հանրապետություններում, եվրոպական երկրներում և Ամերիկայում սփռված հայերի թվաքանակի վերաբերյալ, հիշեցվում էր Անտանտի կողմից Թուրքիայի արևելյան սահմանագծին մոտ «Հայկական ազգային օջախ» ստեղծելու վերաբերյալ հայերին տրված խոստման և հետո այդ խոստումը չպահելու մասին: Հոդվածագիրը հենց սրանով էր պայմանավորում այն հանգամանքը, որ «ընթացիկ պատերազմում աշխարհասփյուռ հայության համակրանքը Գերմանիայի կողմն էր»: Այդ առիթով նա նշում էր, որ հայերն իրենց դասում էին արիական ժողովուրդների շարքում, և «մի օր՝ Գերմանիայի և Իտալիայի ազդեցությամբ միջազգային դրության մեծ վերափոխությունից հետո, նրանք կարող էին դառնալ արժեքավոր միջնորդ տնտեսական բազմակողմ հարաբերությունների կառուցման գործում» (Rohrbach, Der Orient in Bewegung 129(1)-4(132)): Հետևաբար, ըստ դր. Ռոհրբախի, անհրաժեշտ էր ուշադրություն դարձնել հայերին և բարեկամական կապեր պահպանել նրանց հետ: Այդ առումով նա բերում էր Իտալիայի օրինակը՝

վկայակոչելով 1939 թ. դեկտեմբերի 17-ին Եթովպիայի մայրաքաղաք Ադիս Աբեբայի հայկական համայնքի ավելի քան 1500 ներկայացուցիչների առջև ֆաշիստական մամուլի և քարոզչության դաշնային տեսուչի ելույթը, որն ավարտվել էր «հայ բարեկամներին» ուղղված՝ Ֆաշիստական Իտալիայի հետ մշակութային համագործակցության կոչով (Rohrbach, Der Orient in Bewegung 129(1)-4(132)):

Գերմանիայում հետզհետե ծավալվող հակահայ շարժումը կասեցնելու նպատակով ԳՀԸ-ն վճռում է նաև վերահրատարակել իր՝ 1934 թ. տպագրված “Armeniertum-Ariertum” (Armeniertum-Ariertum) («Հայկականություն-արիականություն») ժողովածուն (քանի որ հիշյալ հրատարակության ամբողջ տպաքանակը վաճառվել էր): Այդ առաջադրանքի իրագործմանը լծվում է պրոֆ. Ա. Աբեղյանը՝ դր. Պ. Ռոհրբախի աջակցությամբ 1942 թ. այն հասցնելով իր նպատակին: Ժողովածուն լույս է տեսնում Շտուտգարտում: Այն ամփոփում էր նախորդ հրատարակության՝ հայերի արիական պատկանելությունը փաստող 10 հոդվածները՝ հեղինակված պրոֆ. Հանս Հայնրիխ Շայդերի, Յոհաննես ֆոն Լերսի, պրոֆ. Ա. Աբեղյանի, Կարլ Ռոթի, Գերհարդ Քլինգեի, քահանա Էվալդ Շթիրի, պրոֆ. Յոզեֆ Ստրժիգովսկու, Սաքսոնիայի դուքս պրոֆ. ֆոն Մաքսի, Ռ. Շեֆերի և դր. Պ. Ռոհրբախի կողմից (Աբեղեան 154), և 3 նոր հոդված՝ հեղինակված պրոֆ. Նիկողայոս Ադոնցի, դր. Էմիլ Ֆոռերի և դր. Գյունթեր Ռայխենքրոնի կողմից (Բախչինյան 68; “Armeniertum-Ariertum” 21 (189)):

ԳՀԸ-ի քարոզչական պայքարը նույնպես հասնում է իր ցանկալի նպատակին. թուրքերի զառանցանքները հաղթահարվում են, և կառավարությունը վերահաստատում է հայերի արիական ժողովուրդ լինելու իրողությունը, ինչի շնորհիվ Գերմանիայում և նրա կողմից ռազմակալված տարածքներում բնակվող շուրջ 500.000 հայեր փրկվում են նոր հնարավոր ցեղասպանությունից: Հատկանշական է, որ դեպքերի ժամանակակիցներից մեկը՝ Մանասե Սևակը, գրել է հետևյալը. «Հոս հարցնել հարկաւոր է, թե ի՞նչ պիտի ըլլար այս կէս միլիոն հայերուն ճակատագիրը, եթէ նախախնամական դեր մը կատարած չըլլար պրոֆ. Աբեղեան, տոքթ. Ռորպախի հետ խեղդելով այդ հակահայ և թրքական ոխերիմ շարժումը իր օրրանին մէջ» (Սեւակ 1; “Armeniertum-Ariertum” und die Zeitschrift “Armenia” in italienischer Sprache 12 (60)-13 (61); Kurze Berichte. Die Armenier in Italien 21 (189); Rohrbach, Armenien und die Armenier 5 (197); Schäfer (109) 21))[1]:

Երկրորդ աշխարհամարտի ժամանակաշրջանում վերոնշյալ երկու անհատականությունները՝ դր. Պ. Ռոհրբախն ու պրոֆ. Ա. Աբեղյանը, մեծ ներդրում են ունենում նաև հայանպաստ մի շարք ուրիշ աշխատանքներում: Մասնավորապես՝ սերտ կապի մեջ լինելով Բեռլինում գտնվող Գարեգին Նժդեհի (Գարեգին Տեր-Հարությունյան) (Հայրունի 136)[2], Դրոյի (Դրաստամատ Կանայան) և ուրիշ ականավոր հայերի հետ՝ նրանք ջանում էին իրենց հնարավորությունների սահմաններում սատար

[1] Դեռևս 1939 թ. Հռոմում լույս էր ընծայվել «Հայկականություն-արիականություն» ժողովածուի իտալերեն թարգմանությունը՝ իտալացի հրապարակախոս Կառլո Բարդուցիի հեղինակած առաջաբանով (“Armeni Ariani”, Roma, Edition “HIM”, 1939): Դրա ներգործությամբ Իտալիայում բնակվող հայերը պաշտոնապես ընդգրկվել էին արիական ժողովուրդների ցուցակում՝ ապահովագրվելով ոչնչացումից: Սրան հաջորդել էր Իտալիայի քաղաքացիություն չունեցող հայերի նկատմամբ խտրականության վերացումը: Այդ մասին է վկայում 1940 թ. հոկտեմբերի 14-ին Իտալիայի ֆինանսների նախարարի կողմից դր. Պ. Ռոհրբախին ուղարկված հաղորդագրությունը, որտեղ նշվում է, որ «Իտալիայում, նրա գաղութներում և կայսրության այլ տարածքներում բնակվող բոլոր այն հայերը, որոնք չունեն Իտալիայի քաղաքացիություն, չեն համարվում թշնամի օտարերկրացի և, հետևաբար, որևէ սահմանափակման ենթակա չեն»:

[2] Դր. Պ. Ռոհրբախի հետ սերտ կապի մասին վկայել է Գ. Նժդեհը 1944 թ. նոյեմբերի 4-ի հարցաքննության ժամանակ: «1942 և 1943 թվականներին, - նշել է նա, - ես բազմիցս հանդիպումներ եմ ունեցել գերմանացի նշանավոր գեոպոլիտիկ Պ. Ռոհրբախի հետ, որը ԳՀԸ-ի նախագահն էր»:

լինել հայ ռազմագերիներին և պաշտպանել հայ ժողովրդի ազգային շահերը (Հայրապետյան 129-132; Մեյեր և Բերքյան 133-199)[1]:

Հայ-գերմանական մշակութային կապերի զարգացմանն ուղղված աշխատանքները

Արդեն նշվեց, որ պատերազմի ժամանակաշրջանում ԳՀԸ-ն զգալի աշխատանք է կատարել նաև հայ-գերմանական մշակութային կապերի զարգացումը խթանելու ուղղությամբ:

Մանրամասնելով նշենք, որ դեռևս 1930-ական թթ. Բեռլինում հիմնադրել էր «Հայ երիտասարդների միություն»-ը, որի ղեկավար կազմը բաղկացած էր հիմնականում ուսանողներից: 1938 թ. մայիսին այն վերակազմավորվեց «Հայ ուսանողների միության»: Ըստ MDAG-ի՝ վերջինս նոր կազմակերպություն չէր, այլ իրավահաջորդն ու շարունակողն էր 1860 թ. Լայպցիգի համալսարանի հայ ուսանողների հիմնադրած «Հայ ակադեմիական միության», որը արգասաբեր աշխատանք էր իրականացնում հայ-գերմանական մշակութային կապերի ոլորտում (Der Armenische Studentenbund in Berlin 125 (13)): Բեռլինի «Հայ ուսանողների միության» առաջին նախագահը ԳՀԸ-ի վարչության անդամ Շավարշ Հարությունյանն էր: 1940 թ. հունիսի 4-ին կայացած ընդհանուր ժողովում միության նոր նախագահ ընտրվեց ընկերության վարչության մեկ ուրիշ անդամ՝ ինժեներ Արա Մալայանը, իսկ քարտուղար՝ ապագա ինժեներ Կարեն Հայրանյանը: Ժողովում ընդգծվեց նոր նախագահի խնդիրը, այն է՝ աջակցել գերմանական բուհերում սովորող հայ և գերմանացի ուսանողների անձնական կապերի զարգացմանն ու արդյունավետ աշխատանքի միջոցով ապահովել համագործակցությունը միության և գերմանական ուսանողական կազմակերպության միջև (Der Armenische Studentenbund in Berlin 125 (13)-(14) 126):

Նշենք, որ հայ ուսանողներից բացի՝ Գերմանիայում զգալի քանակ ունեին նաև հայ ակադեմիականները: Նրանց ևս աջակցելու և հայ-գերմանական գիտամշակութային կապերը խորացնելու նկատմամբ առկա բուռն հետաքրքրությունը հանգեցրեց նրան, որ Բեռլինի «Հայ ուսանողների միությունը» 1940 թ. սեպտեմբերի 19-ի Ընդհանուր ժողովում ենթարկվեց վերաձևման: Այն վերանվանվեց «Հայ ակադեմիական միություն 1860»: Հաստատվեց միության՝ 15 կետից բաղկացած կանոնադրությունը (Von der Vorstand des Armenisch-Akademischen Vereins, Der Armenisch-Akademische Verein 1860 in Berlin, 8 (136)-9 (137)): Ժողովը նաև

[1] 1942 թ. դեկտեմբերի 15-ին Բեռլինում հիմնվում է Հայ ազգային խորհուրդ՝ պրոֆ. Ա. Աբեղյանի նախագահությամբ: Խորհրդի աշխատանքներին մասնակիցում էին Դրոն, Գ. Նժդեհը, Աբրահամ Գյուլխանդանյանը (փոխնախագահ) և ուրիշներ: Խորհրդի առաջնահերթ նպատակը հայ ռազմագերիներին և հայոց ազգային շահերը պաշտպանելն էր: Հայ ազգային խորհուրդը մի քանի ամիս անց դառնում է Հայ ազգային կոմիտե, իսկ 1943 թ. գերմանական կառավարությունն ազգային կոմիտեները վերածում է ազգային կառավարությունների՝ այն նպատակով, որ Խորհրդային միության պարտության պարագայում այդ կառավարությունները կազմ ու պատրաստ մեկնեին իրենց երկրները և իրականացնեին իրենց գործառույթները: Ա. Աբեղյանն ընտրվում է վտարանդի կառավարության նախագահ:

Ռազմագերիների հարցը լուծվում է նրանով, որ գերմանացիները կազմում են Հայկական լեգեոն, որը պետք է պատերազմում մարտնչեր նացիստների կողմից, իսկ հաղթանակից հետո դառնար սեփական երկրի ապագա բանակի հիմքը: Ավելի լավ բան հայ գերիների համար չէր կարող լինել: Ընդգրկվելով հայկական լեգեոնի շարքերում՝ նրանք փրկվում են ցեղասպանվելու վտանգից: Բացի այդ՝ անվտանգության երաշխիքներ են ստեղծվում Հայաստանի համար. եթե գերմանացիների հաղթանակի դեպքում թուրքերը ներխուժեին Հայաստան, որին կասկած չկա, որ նրանք պատրաստվում էին ձեռնամուխ լինել, ապա հայկական լեգեոնի խնդիրը պետք է լիներ իր հայրենիքի պաշտպանությունը:

ձևավորեց վարչության նոր կազմ: Վերընտրվեցին կամ ընտրվեցին՝ որպես միության նախագահ Ա. Մալայանը, քարտուղար՝ Շ. Հարությունյանը, գանձապահ՝ Կ. Հայրանյանը, պատվավոր նախագահ՝ պրոֆ. Ա. Աբեղյանը: Միությունը որոշեց դառնալ գերմանական գիտական կազմակերպություններից մեկի՝ “Humboldt-Klub” («Հումբոլդտ ակումբ») կորպորատիվ անդամ՝ գերմանացի ակադեմիականների հետ սերտ համագործակցություն ապահովելու համար: Ընդհանուր ժողովում նաև քննարկումներ ծավալվեցին հայկական մշակույթի պրոպագանդման և այդ նպատակով ֆոնդի ստեղծման շուրջ:

Բեռլինի Հայ ակադեմիական միությունը շուտով մեծ աջակցություն ստացավ ԳՀԸ-ից: Վերջինիս վարչության անդամ Արամ Տեր-Մինասյանն այդ միության՝ հայկական մշակույթի պրոպագանդման նպատակով ստեղծված ֆոնդին նվիրաբերեց 100 ռայխսմարկ: Ընկերության քարտուղար Ռ. Շեֆերն ուղարկեց հայկական մշակութային արժեքների վերաբերյալ նյութեր, իսկ պրոֆ. Ա. Աբեղյանը, Ա. Մալայանը և Շ. Հարությունյանը՝ հայաստանյան թեմայով մեծ քանակությամբ գրականություն (Von der Vorstand des Armenisch-Akademischen Vereins, Der Armenisch-Akademische Verein 1860 in Berlin 8 (136)-10 (138)):

Կարճ ժամանակամիջոցում Բեռլինի Հայ ակադեմիական միությանը հաջողվեց կապեր հաստատել գերմանացի բազմաթիվ ականավոր գիտնականների, ինչպես նաև գերմանական գիտական հաստատությունների, այդ թվում՝ «Humboldt-Klub»-ի հետ: 1940 թ. նոյեմբերի 7-ին նշված ակումբում կազմակերպվեց հայկական երեկո, որի ընթացքում ընթերցված դասախոսությունները վերաբերում էին բացառապես հայկական մշակույթին և հայ-գերմանական մշակութային փոխառնչություններին (Bericht des Armenisch-Akademischen Vereins 1860 e. V. für die Geschäftszeit vom September 1940 bis Juni 1941 23 (191) - 24 (192)): Նմանատիպ միջոցառումները շարունակվեցին նաև հետագայում:

Բեռլինի Հայ ակադեմիական միության գործունեության անքակտելի մասն էր արտասահմանից Գերմանիա նոր տեղափոխված հայ ուսանողներին աջակցելը: Այն ոչ միայն համախմբում էր նրանց, այլև խթանում նրանց և գերմանացի ուսանողների անձնական կապերի զարգացումը, նրանց և գերմանաբնակ հայերի շփումները: Այդ կարևոր գործառույթներից զատ՝ այն նաև հայ ուսանողներին օգնում էր սովորել գերմաներեն, կատարելագործել գիտելիքներն այդ լեզվից, գտնել աշխատանք և այլն (Bericht des Armenisch-Akademischen Vereins 1860 e. V. für die Geschäftszeit vom September 1940 bis Juni 1941 24 (192)): «Հայ հասարակությունը մեծ հետաքրքրություն ունի ուսանողների հանդեպ, - գրում էր միության նախագահ Ա. Մալայանը 1943 թ.: -Այդ երիտասարդները կոչված են կապելու Արևմուտքի հոգևոր հայացքները հայության այն հետաքրքրություններին, որոնք շահեկան են մայր երկրի համար: Գաղութի և ուսանողության միջև կապը պետք է անաղարտ պահել՝ ուծացման վտանգից խուսափելու համար» (Malayan 18 (210)):

Այսպիսով՝ պատերազմի տարիներին Բեռլինի Հայ ակադեմիական միությունն իր ներդրումն էր բերում հայանպաստ աշխատանքներում՝ գերմանական հասարակությանը ծանոթացնելով հայ ժողովրդի հոգևոր կյանքի նվաճումներին, աջակցելով երկու ժողովուրդների գիտամշակութային փոխառնչությունների ընդլայնմանը:

Ընկերության լուծարումը

Ինչ վերաբերում է ԳՀԸ-ին, ապա այն իր հայանվեր առաքելությունն անխոնջ շարունակեց պատերազմի գրեթե ամբողջ տևողության ընթացքում՝ չնայած հետզհետե տկարացող ուժերով: 1940 թ. ապրիլի 9-ին Մայնի Ֆրանկֆուրտում վախճանվեց նրա համահիմնադիր և հայ ժողովրդի երկարամյա բարեկամ դր. Մարտին Ռադեն: MDAG-ի՝ նույն տարվա մայիսի համարում (թիվ 7-8) տպագրված

մահախոսականում (Stier, Rade 18 (106)- (107) 19) ԳՀԸ-ի փոխնախագահ Է. Շթիրը (Meißner, Rades 374) [1] դր. Ռադեին անվանում էր «Գերմանիայի Ավետարանական եկեղեցու ամենանշանավոր ներկայացուցիչներից մեկը և դեռ ավելին» (Meißner, Rades 18 (106)), ապա շարունակելով՝ նրան տալիս էր հետևյալ բնութագիրը. «Հաստատուն բնավորություն, որը միշտ, անկախ իշխող հոսանքից, համարձակորեն պաշտպանում էր այն, ինչն ինքը համարում էր իրավացի՝ ի սեր ճշմարտության և արդարության, ուներ բարի հայացք և մեղմ բնավորություն, որոնք նրան հնարավորություն էին տալիս համաձայնության գալ նաև հակառակորդի հետ և հաշտության ձեռք մեկնել նրան» (Meißner, Rades 18 (106)):

Նշենք, որ 1938 թ. դեկտեմբերի 3-ի ընտրությունից հետո մինչև 1940 թ. ԳՀԸ-ի վարչության կազմն անփոփոխ էր՝ դր. Պ. Ռոհրբախ (նախագահ), քահանա Է. Շթիր (փոխնախագահ), պրոֆ. Ա. Աբեղյան (փոխնախագահ), Դետլոֆ Ֆոգտ (գանձապահ), Ռ. Շեֆեր (գերմանացի քարտուղար), Պետրոս Ֆրունջյան (հայ քարտուղար), Արիս Չալթջյան, Դավիթ Դավիթխանյան, դր. Գ. Տեր-Հարությունյանց, պրոֆ. Հ. Հ. Շայդեր, քահանա Գ. Քլինգե, Ալիսե Լեփսիուս, Գերտրուդ Հեթցել, դր. Յաննես Իփլիքջյան, դր. Ս. Տեր-Օհանեսյան, ինժեներներ Ա. Մալայան ու Ա. Տեր-Մինասյան, Շ. Հարությունյան և Ա. Վամպուշ (վերատեսուչներ) (Der Vorstand der Deutsch-Armenischen Gesellschaft 24 (112)): 1940 թ. սեպտեմբերի 30-ի Ընդհանուր ժողովում այն համալրվեց 4 նոր անդամներով՝ դր. Վիկտոր Դոմկե, դր. Գ. Ռայխենքրոն, իրավաբան և նոտար Հ. Ֆրոհլիխ, Գերհարդ Շնայդեր (Aus der Deutsch-Armenischen Gesellschaft 143 (15)): Ընկերության վարչության կազմի մասին վերջին անգամ տեղեկություն ենք ստանում 1944 թ. աղբյուրից: Այդ թվականին այն ներկայանում էր հետևյալ կազմով՝ դր. Պ. Ռոհրբախ (նախագահ), քահանա Է. Շթիր (փոխնախագահ), պրոֆ. Ա. Աբեղյան (փոխնախագահ), Դետլոֆ Ֆոգտ (գանձապահ), Ռ. Շեֆեր, դր. Գ. Ռայխենքրոն, իրավաբան և նոտար Հ. Ֆրոհլիխ, Գ. Շնայդեր (գերմանացի քարտուղար), Պ. Ֆրունջյան (հայ քարտուղար), Ա. Չալթջյան, Դ. Դավիթխանյան, դր. Գ. Տեր-Հարությունյանց, պրոֆ. Հ. Հ Շայդեր, պրոֆ. Վ. Քլասեն, քահանա Գ. Քլինգե, Վ. Դոմկե, Ա. Լեփսիուս, Գ. Հեթցել, դր. Յ. Իփլիքջյան, դր. Ս. Տեր-Օհանեսյան, ինժեներներ Ա. Մալայան և Ա. Տեր-Մինասյան, Շ. Հարությունյան, Ա. Վամպուշ (Das Titelblatt der Zeitschrift der Deutsch-Armenischen Gesellschaft “Armenien. Mitteilungsblatt der Deutsch-Armenischen Gesellschaft”):

Նշենք, որ ԳՀԸ-ն գոյատևում էր անդամավճարներից գոյացող եկամուտների հաշվին: Երկրորդ աշխարհամարտի բռնկումից հետո խզվել էր ընկերության կապը Բեռլինից դուրս գտնվող իր անդամների հետ (Schäfer 23 (87)), ինչը, բնականաբար, սոցիալական լուրջ խնդիրներ էր ստեղծելու նրա համար: Ըստ երևույթին, դա էր պատճառը, որ 1944 թ. ԳՀԸ-ն դադարեցնում է իր “Armenien” պարբերականի հրատարակումը, որի վերջին համարը լույս է տեսնում սեպտեմբերին (թիվ 17-18): Բովանդակելով բացառապես գրական բնույթի նյութեր՝ այն եզրափակվում էր ընթացիկ բնույթի մի հրապարակումով՝ «Վիգեն Շանթ՝ երիտասարդ լրագրող և Արևելյան նախարարության (Ռայխի նախարարությունը գրավյալ արևելյան տարածքների համար-Հ. Ս.) Կովկասյան բաժնի աշխատակից: Ծնվել է 1906 թ. Շվեյցարիայում և զոհվել Բեռլինի վրա օդային հարձակումներից մեկի ժամանակ (1944 թ. մարտ)» (Schanth):

Պարբերականը ԳՀԸ-ի երեսնամյա հայանվեր առաքելության վերջին հավաստագիրն էր:

Նույն թվականին ընկերությունը կասեցնում է նաև իր գործունեությունը, իսկ 1956 թ. հուլիսի 20-ին դր. Պ. Ռոհրբախի մահից հետո՝ նոյեմբերի 30-ին, հեռացվում է Բեռլինի միությունների ցանկից (Röseler 93-94) ՝ անդամներ չունենալու պատճառով:

[1] Է. Շթիրը վախճանվեց 1946 թ. հունիսի 9-ին Դասաուում, որտեղ և հուղարկավորվեց հունիսի 14-ին:

Այդ մասին է վկայում 1956 թ. նոյեմբերի 30-ի N 104-րդ թերթիկը (Mouradian 8), որտեղ որպես նրա լուծարման պատճառ նշվում է, որ «վարչությունը փաստացի գոյություն չունի», այնուհետև ավելացվում է, որ ԳՀԸ-ն նորից գոյություն կունենա, եթե ունենա առնվազն 7 անդամ (Mouradian 8): Հատկանշական պետք է համարել այն հանգամանքը, որ 1960-ական թթ. Գերմանիայում հայերի թվաքանակի աճը դարձավ կազմակերպության վերաբացման հիմնական նախադրյալներից մեկը:

Եզրակացություն

Այսպիսով՝ ամփոփելով ուսումնասիրությունը՝ կարող ենք փաստել, որ Երկրորդ աշխարհամարտի ժամանակաշրջանում հայ ժողովրդին պատուհասած դժվարին մարտահրավերների և սպառնալիքների պայմաններում ԳՀԸ-ն շարունակում էր իր ավանդական հայանվեր առաքելությունը՝ մի կողմից իր ներդրումը բերելով Գերմանիայի հասարակության մեջ և նրա ղեկավար շրջաններում հայանպաստ կարծիքի և տրամադրությունների ձևավորման, մյուս կողմից՝ հայ-գերմանական գիտամշակութային կապերի սերտացումը խթանելու ուղղությամբ իրականացվող աշխատանքներում: Այնուամենայնիվ, Երկրորդ աշխարհամարտն ուժգին հարված է հասցնում ընկերությանը՝ խորտակելով հայ-գերմանական բարեկամության այդ կամուրջը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աբեղեան, Արտաշես. *Հայութիին-արիականութիին, Armeniertun-Ariertum: Հրատարակութիւն Գերման եւ Հայ ընկերութեան,* Բեռլին-Պոտսդամ, 1934 թ., «Հայրենիք» ամսագիր, № 8, Պոսթըն, 1934, էջ 154-156:
2. Բախչինյան, Հենրիկ. *Արտաշես Աբեղյանի կյանքի ժամանակը.* «Գարուն», թիվ 7, Երևան, 1995, էջ 67-69:
3. «Հայկականութիին-արիականութիին». *գերմաներենից թարգմանեց՝ Տոնոյան Ա.*, Երևան, 2001, 152 էջ:
4. Հայրապետյան, Հարություն. *Արտաշես Աբեղյան. մեծ բանասերն ու հասարակական գործիչը.* «Հայագիտության հարցեր», № 3, Երևան, 2016, էջ 117-134:
5. Հայրունի, Աշոտ. *Պաուլ Ռոհրբախը և Հայաստանը.* «ՎԷՄ», թիվ 4, Երևան, 2011, էջ 125-139:
6. Մեյեր Էնոո, Բերքյան Արա. *Հռենոսի և Արաքսի միջև: 900 տարվա գերմանա-հայկական հարաբերություններ.* թարգմ.՝ Լ. Բերքյան-Աբրահամյան, Ե., «Տիգրան Մեծ», 2016, 267 էջ:
7. Սեւակ, Կարեն Մանասե. *Փրոֆ. Արտաշէս Աբեղեանի պայքարը նացիստների հակահայ քաղաքականութեան դէմ եւ այդ պայքարի ճակատագրական հետեւանքները.* «Հայրենիք» օրաթերթ, № 13, 116, յունիս 10, Պոսթըն 1955, էջ 1:
8. “Armeniertum-Ariertum”. *von der Deutsch-Armenischen Gesellschaft Berlin unter Mitwirkung von H. H. Schaeder u. a.,* Potsdam, 1934, 52 S.
9. “Armeniertum-Ariertum” und die Zeitschrift “Armenia” in italienischer Sprache. *MDAG*, Berlin, № 4, April 1939, S. 12 (60)-13 (61).
10. “Aus der Deutsch-Armenischen Gesellschaft”. *MDAG*, Berlin, № 10, Dezember 1940, S. 143 (15).
11. “Bericht des Armenisch-Akademischen Vereins 1860 e. V. für die Geschäftszeit vom September 1940 bis Juni 1941”. *MDAG*, Berlin, № 13-14, Oktober, 1942, S. 23 (191)-24 (192).
12. “Das Titelblatt der Zeitschrift der Deutsch-Armenischen Gesellschaft “Armenien”. *Mitteilungsblatt der Deutsch-Armenischen Gesellschaft* vom September 1944, № 17-18.

13. “Der Armenische Studentenbund in Berlin”, *MDAG*, Berlin, № 9, Oktober 1940, S. 125 (13) - 14 (126).

14. “Der Vorstand der Deutsch-Armenischen Gesellschaft i. A. Dr. Paul Rohrbach. Vorsitzender. Kurze Berichte. Aus der Deutsch-Armenischen Gesellschaft”. *MDAG*, Berlin, № 9, Oktober 1940, S. (127) 15.

15. “Der Vorstand der Deutsch-Armenischen Gesellschaft”. *MDAG*, Berlin, № 7-8, Mai 1940, S. 24 (112).

16. “Kurze Berichte. “Armeniertum-Ariertum””. *MDAG*, № 13-14, Oktober 1942, S. 21 (189).

17. “Kurze Berichte. „Armenien“, Mitteilungsblatt der Deutsch-Armenischen Gesellschaft”. *Armenien. Mitteilungsblatt der Deutsch-Armenischen Gesellschaft e. V.*, Berlin, № 15-16, Dezember 1943, S. 215 (23) – 24 (216).

18. “Kurze Berichte. Die Armenier in Italien”. *MDAG*, Berlin, № 13-14, Oktober 1942, S. 21 (189).

19. Malayan, Ara. *Der armenische Studententum in Deutschland. MDAG*, Berlin, № 15-16, Dezember 1943, S. 16 (208) - 18 (210).

20. Meißner Axel. *Martin Rades “Christliche Welt” und Armenien. Bausteine für eine internationale Ethik des Protestantismus.* Band 22, Berlin, 2010, S. 548 S.

21. Mouradian, Alfred. *Chronik der Deutsch-Armenischen Gesellschaft in Berlin.* “Armenisch-Deutsche Korrespondenz”, November 1974, № 7, Mainz-Heidelberg, November 1974, S. 6-8.

22. Rohrbach, Paul. *Armenien und die Armenier. MDAG*, Berlin, № 15-16, Dezember 1943, S. 1 (193) - 5 (197).

23. Rohrbach, Paul. “Der Orient in Bewegung”. *MDAG*, Berlin, № 10, Dezember 1940, S. 129 (1) – 4 (132).

24. Rohrbach, Paul. “Kaukasien”. *MDAG*, Berlin, № 13-14, Oktober 1942, S. 1 (169) - 3 (171).

25. Röseler Peter Frank. *Die Geschichte der Deutsch-Armenischen Gesellschaft, 75 Jahre Deutsch-Armenische Gesellschaft.* Festschrift, hg. von der Deutsch-Armenischen Gesellschaft, Mainz, 1989, S. 77-99.

26. Schäfer,Richard. “Aus der Deutsch-Armenischen Gesellschaft”. *“Mitteilungsblatt der Deutsch-Armenischen Gesellschaft e. V. Berlin”*, Berlin, № 7-8, Mai 1940, S. (109) 21.

27. Schäfer,Richard. “Aus der Deutsch-Armenischen Gesellschaft”. *MDAG*, Berlin, № 5-6, Dezember 1939, S. 23 (87) - 24 (88).

28. Schanth, Wigen. *Kurze Berichte Armenien*. MDAG”, № 17-18, September 1944, unpaginiert.

29. Stier, Ewald. Martin Rade. MDAG, Berlin, № 7-8, Mai 1940, S. 18 (106) – (107) 19.

30. “Von der Vorstand des Armenisch-Akademischen Vereins. Der Armenisch-Akademische Verein 1860 in Berlin”. *MDAG*, Berlin, № 10, Dezember 1940, S. 8 (136) - 10 (138).

WORKS CITED

1. Abeġean, Artashes. *Hayutiin-ariakanutiin, Armeniertun-Ariertum: Hratarakutiwn German ew Hay ynkerutean*, Beřlin-Potsdam, 1934 t., «Hayrenik» amsagir, № 8, Postyn, 1934. [Armeniertun-Ariertun. Publication of the German and Armenian Society, Berlin-Potsdam 1934, "Hayrenik" daily, No. 8, Postn] 1934. (In Armenian).

2. Baxčinyan, Henrik. *Artashes Abeġyani kyanki zamanaky,* «Garun», tiv 7, Erewan, 1995. [Artashes Abeghyan’s life time. "Spring", No. 7, Yerevan] 1995. (In Armennian).

3. *«Haykakanutiin-ariakanatiin»,* germanerenic targmanec՝ Tonoyan A., Erevan, 2001. *["Haykakanutiin Ariyakanutiin"* translated from German by A. Tonoyan, Yervan] 2001. (In Armenian).

4. Hayrapetyan, Harutyun. *Artashes Abeġyan. mec banasern u hasarakakan gorcitsy,* «Hayagitutyan harcer», № 3, Erevan, 2016. [Artashes Abeghyan. The Great Philologist and Public Figure. "Issues of Armenian Studies", No. 3, Yerevan] 2016. (In Armenian).

5. Hayruni, Ashot. *Paul Ṙohrbachy ev Hayastany*, «VEM», tiv 4, Erevan, 2011. [Paul Rohrbach and Armenia. "VEM", No. 4, Yerevan] 2011. (In Armenian).

6. Meyer Enno, ev Berkyan Ara, *Hṙenosi ev Araksi mijev: 900 tarva germana-haykakan haraberutyunner,* targm. L. Berkyan-Abrahamyan, Erevan, «Tigran Mec», 2016. [Between the Rhine and the Araxes. 900 years of German-Armenian relations, translated by L. Berkyan- Abrahamyan, E., "Tigran the Great"] 2016. (In Armenian).

7. Sewak, Karen. *Prof. Artashes Abeġeani paykary nacistneri hakahay kaġakakanutean dem ew ayd paykari tsakatagrakan hetewanknery,* «Hayrenik» oratert, № 13, 116, yunis 10, Postyn, 1955. [Prof. Artashes Abeghian's Struggle against the Nazis' Anti-Armenian Policy and the Fatal Consequences of that Struggle, "Hayrenik" daily, No. 13, 116, June 10, Postn] 1955. (In Armenian).

ACTIVITIES OF THE GERMAN-ARMENIAN SOCIETY DURING WORLD WAR II AND ITS DISSOLUTION (1939-1956)

MERI NAJARYAN
National Agrarian University of Armenia,
Faculty of Agribusiness and Economics,
Head of the Department of Social Sciences,
Ph.D. in History, Associate Professor,
Yerevan, the Republic of Armenia

HRANUSH SAHAKYAN
National Agrarian University of Armenia,
Faculty of Agribusiness and Economics,
Chair of Social Sciences,
Ph.D. in History, Assistant,
Artashat, the Republic of Armenia

The purpose of the article is to highlight the pro-Armenian activities of the German-Armenian Society (hereinafter referred to as GAS, German: Deutsch-Armenische Gesellschaft, DAG) during the Second World War, based on specific factual materials. In particular, reference was made to the company's Armenian rescue activities, the steps taken by it in the direction of forming a pro-Armenian public opinion in Germany and strengthening Armenian-German cultural ties are presented. Considering that many ongoing global processes today have certain appeals with the issue that has become the subject of our study, the importance of highlighting this issue from the perspective of Armenian political and historical thought becomes clear.

To achieve the stated objective, during the research of the topic, the following primary tasks were set: to critically analyze the activities carried out by the organization during the Second World War on the basis of specific factual materials, to showcase their main results, and to clarify the reason for its dissolution. Although individual issues related to the topic to one degree or another have been studied at a proper level, it is nevertheless notable that the issue that has become the subject of our study has not

previously undergone a complete and systematic examination within these chronological boundaries. The investigation has been largely based on wide range of valuable German sources that have not yet been circulated in historiography.

The study was conducted using a methodology of comparative and critical analysis of diverse primary sources and literature related to the topic, applying historical descriptive method and the principle of historicity.

The main conclusion made within the framework of the research is that during the war years, GAS, without deviating from its ideological foundations, continued its pro-Armenian activities and the promotion of Armenian-German cultural ties. Along with this, it should be noted that under war conditions, having no contact with its members outside of Berlin and being unable to recruit members, the company suspended its activities in 1944 and was removed from the list of Berlin associations in 1956.

Keywords: *German-Armenian Society, war, Dr. Paul Rohrbach, Prof. Artashes Abeghyan, culture, Armenian-German relations, dissolution.*

ДЕЯТЕЛЬНОСТЬ НЕМЕЦКО-АРМЯНСКОГО ОБЩЕСТВА ВО ВРЕМЯ ВТОРОЙ МИРОВОЙ ВОЙНЫ И ЕГО РОСПУСК (1939-1956 ГГ.)

МЕРИ НАДЖАРЯН
заведующая кафедрой общественных наук
факультета агробизнеса и экономики
Национального аграрного университета Армении,
кандидат исторических наук, доцент,
г. Ереван, Республика Армения

ГРАНУШ СААКЯН
ассистент кафедры общественных наук
факультета агробизнеса и экономики
Национального аграрного университета Армении,
кандидат исторических наук,
г. Арташат, Республика Армения

Цель статьи - на основе конкретных фактических материалов представить проармянскую деятельность Немецко-армянского общества во время Второй мировой войны. В частности, обращается внимание на работу общества по спасению армян, а также представлены шаги, предпринятые им для формирования проармянского общественного мнения в Германии и укрепления армяно-немецких культурных связей. Учитывая факт, что многие процессы, происходящие сегодня в мире, имеют определенные точки соприкосновения с темой, ставшей предметом нашего исследования, в этом контексте становится понятной важность освещения проблемы с точки зрения армянской политической и исторической мысли.

Для достижения заявленной цели при рассмотрении вопроса мы ставим перед собой следующие основные задачи: на конкретном фактическом материале проанализировать деятельность организации в годы Второй мировой войны, показать ее основные результаты, а также выяснить причину ее роспуска. Хотя отдельные вопросы, относящиеся к теме, ранее были рассмотрены в той или иной степени и на должном уровне, вопрос, ставший предметом нашего исследования, не подвергся полному, систематическому изучению в установленных

хронологических рамках. Исследование проводилось на основе большого количества значимых немецких источников, вводимых в научный оборот впервые.

Исследование проведено с использованием методологии сравнительного и исследовательского анализа разных первоисточников и тематической литературы с использованием метода исторического описания и принципа историчности.

Главный вывод исследования заключается в том, что Немецко-армянское общество продолжало свою проармянскую деятельность и продвижение армяно-германских культурных связей во время войны, не отклоняясь при этом от своего идеологического начала. В то же время следует отметить, что общество, не имевшее во время войны контактов со своими членами за пределами Берлина и не способное привлечь новых членов, прекратило свою деятельность в 1944 году, а в 1956 году было исключено из списка Берлинских союзов.

Ключевые слова: *Немецко-армянское общество, война, доктор Пауль Рорбах, профессор Арташес Абегян, культура, армяно-немецкое отношения, ликвидация.*